ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_ _ սեպտեմբերի 2025 թվականի № -Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 164-րդ կետի համաձայն՝ մատակարարը պարտավոր է դիմող անձի կամ բաժանորդի դիմումի վերաբերյալ Հանձնաժողովի հարցմանը պատասխանել տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե հարցմամբ այլ ժամկետ նախատեսված չէ,

բ) Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հանձնաժողովի թվով 21 գրություններով ներկայացված հարցումներին «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատասխանել է սահմանված ժամկետների հնարավոր խախտմամբ,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Կանոնների 164-րդ կետով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2025 թվականի օգոստոսի 21-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2025 թվականի օգոստոսի 21-ի №ՄՄ/34.4-Մ2-14/4482-2025 գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2025 թվականի սեպտեմբերի 3-ի №ՄՇ/31917 գրությամբ հայտնել է, որ որոշ դեպքերում Հանձնաժողովի կողմից ստացված գրություններին ի պատասխան, հնարավոր չի եղել քննարկվող հասցեներում ժամանակին տեղադրել ճնշման ինքնագրիչ սարք (լոգեր) և սահմանված ժամկետում տալ պարզաբանումներ, իսկ ներկայացված բոլոր գրություններով պահանջվել է քննարկվող հասցեներում տեղադրել ճնշման ինքնագրիչ սարք (լոգեր): Ընկերությունը գրությամբ խնդրել է կայացնել բարենպաստ վարչական ակտ, ըստ էության ընդունելով Կանոնների 164-րդ կետով սահմանված պահանջը խախտելու հանգամանքը,

ե) իրականացված վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 164-րդ կետի պահանջը, այն է՝ մատակարարը պարտավոր է դիմող անձի կամ բաժանորդի դիմումի վերաբերյալ Հանձնաժողովի հարցմանը պատասխանել տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե հարցմամբ այլ ժամկետ նախատեսված չէ: Մասնավորապես Հանձնաժողովի կողմից հարցմանը պատասխանելու համար տրված 7 աշխատանքային օր տևողությամբ պատասխանելու ժամկետները գերազանցվել են՝ 2025 թվականի օգոստոսի 4-ի №ԱՆ/34.4-Մ2-12/3940-2025 գրության դեպքում 1 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 16-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3499-2025 գրության դեպքում 2 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 28-ի №ԱՆ/34.4-Մ2-15/3755-2025 և 2025 թվականի հուլիսի 21-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3571-2025 գրությունների դեպքում 3 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 18-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3544-2025 և 2025 թվականի հուլիսի 28-ի №ԱՆ/34.4-Մ2-15/3755-2025 գրությունների դեպքում 4 աշխատանքային օրով, 2025 թվականի օգոստոսի 1-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3929-2025, 2025 թվականի հուլիսի 17-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3507-2025 և 2025 թվականի հուլիսի 21-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3569-2025 գրությունների դեպքում 5 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 24-ի №ԱՆ/34.4-Մ2-12/3702-2025, 2025 թվականի հուլիսի 17-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3507-2025 և 2025 թվականի հուլիսի 24-ի №ԱՆ/34.4-Մ2-12/3702-2025 գրությունների դեպքում 6 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 21-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3566-2025, 2025 թվականի հուլիսի 22-ի №ԱՆ/34.4-Մ2-15/3602-2025 և 2025 թվականի հուլիսի 23-ի №ԱՆ/34.4-Մ2-15/3657-2025 գրությունների դեպքում 8 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 17-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3515-2025, 2025 թվականի հուլիսի 18-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3549-2025 և 2025 թվականի հուլիսի 21-ի

№ԱՆ/34.4-Մ2-11/3573-2025 գրությունների դեպքում 9 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 18-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3548-2025 գրության դեպքում 10 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 17-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3510-2025 գրության դեպքում 11 աշխատանքային օրով, 2025 թվականի հուլիսի 16-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3497-2025 գրության դեպքում 12 աշխատանքային օրով: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումներին, ապա դրանք չեն կարող հիմք հանդիսանալ խախտման համար պատասխանատվությունից ազատվելու համար, քանի որ դրանցով որևէ կերպ չի հերքվել խախտումների առկայության հանգամանքը, ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն, չեն բխում գործող իրավակարգավորումներից: Ավելին՝ մի շարք դեպքերում նույնիսկ Կանոնների համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված պարզաբանումներով Ընկերությունը, ըստ էության, չի տրամադրել համապատասխան տեղեկատվություն, այլև՝ արդեն իսկ սահմանված ժամկետը խախտած լինելով, ընդամենը հայտնել է ճնշման ինքնագրիչ սարք (լոգեր) տեղադրած լինելու մասին և տեղեկացրել, որ հետագայում լրացուցիչ կներակայացնի համապատասխան տեղեկատվությունը: Հարկ է նշել նաև, որ Ընկերությունը, Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում չի դիմել Հանձնաժողով՝ պարզաբանում տրամադրելու համար սահմանված ժամկետը երկարաձգելու համար կամ չի ծանուցել ժամկետի հնարավոր խախտման մասին:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից նույն օրենսգրքի, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում իրավասու է կիրառելու նույն օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալու դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանձնահատկությունները: Լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներն են՝

1) նախազգուշացում.

2) տուգանք.

3) լիցենզիայի գործողության կասեցում.

4) լիցենզիայի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասհազարապատիկի չափով:

Միաժամանակ, հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակում հաստատված իրավախախտումների և դրանց առաջացրած հետևանքների բնույթը, մասնավորապես՝ Ընկերության կողմից ժամկետի խախտմամբ ներկայացված գրությունների քանակը, մի շարք դեպքերում սահմանված ժամկետից՝ շուրջ երկու անգամ ավելի ուշ ժամկետում պարզաբանում ներկայացված լինելը, ինչպես նաև այն հանգամանքով, որ նշվածը հանգեցրել է Հանձնաժողովին օրենքով վերապահված կարգավորման գործառույթի խոչընդոտմանը և սպառողների իրավունքների և օրինական շահերի խոչընդոտմանը՝ Հանձնաժողովը գտնում է, որ հետագայում Ընկերության պատշաճ վարքագիծն ապահովելու և նշված խախտումների կրկնությունը բացառելու նպատակով վերոնշյալ խախտումների համար որպես համաչափ պատասխանատվության միջոց անհրաժեշտ է կիրառել տասը միլիոն ՀՀ դրամ գումարի չափով տուգանք:

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 164-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել տասը միլիոն դրամ գումարի չափով:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ

կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումն սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2025թ.